

2218

ՀՀԳ-Ը Վիկոր

Ֆրանս - Պրահական
պատրիարքութեա
Պրօվէկիթէ:

Կումարի գալուսկովի
անվայրե

Վեհապ Հյուզոն
համահանա

84
7-85

Մուկըս
1893

ՖՐԱՆՍ-ՊՐՈՒՍՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

ԴՐՈՇԱԿԻՐԸ.

ԿՈԼՄԱՐԻ ԴԱՏԱԽՈՐԻ ՏԵՍԻԼՔԸ.

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՈՆ

bh

Ի ՏԱԼԻ ԱՆ.

ՄՈՅԿՈՒԹ.

ՏՊԱՐԱՆ Ք. ԲԱՐԽՈՒԴԻԴԱՐԵԱՆ հ.

1893

(57)

84
2.85

ԳՐԱՆ-ՊՐՈՒՍՍԻԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

24
2485^ա

ԴՐՈՇԱԿԻՐԸ.

ԿՈԼՄԱՐԻ ԴԱՏԱԽՈՐԻ ՏԵՍԻԼՔԸ.

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԳՈՆ

bh

ԻՏԱԼԻԱՆ.

328

2003

ՄՈՅԿՈՒԾ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՑԻՉ ԲԱՐԽՈՒԹՅԱՐԵԱՆ հ.

1893

(55)

ֆՐԱՆՍ-ՊՐՈՒՍՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ*)

(ԹՌՈՒՑԻԿ ԱԿՆԱՐԿ)

Աղջօնս Դօդէի «Կօլմարի դատաւորի տեսիլքը» և «Դրօշակիլ» մանրավէպերը, որոնք թարգմանուած տրպուում են այս ժողովածուի մէջ, ինչպէս և նոյն հեղինակի մի քանի ուրիշ մանրավէպերը, որոնց հայերէն թարգմանութիւնը կայ («Փռքրիկ լրտես», «Բերլինի պաշարումը», «Վերջին դասը»), վերաբերուում են Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակին, — նորագոյն պատմութեան ամէնախայտառակ և ամէնատիրուալի վայրկեաններից մէկին: 20—22 տարի սրանից առաջ աշխարհս ականատես եղաւ մի զարհուրելի ու ամօթալի տեսարանի, — քաղաքակրթութեան գլուխը կանգնած երկու փառաւոր ազգեր՝ Ֆրանսիացիք ու Գերմանացիք՝ կարծես իրանց բոլոր շժերը լարել էին միմեանց ջնջելու, միմեանց հայրենիքը հիմնայտակ կործանելու համար: Բաւական չէին այն անհամար վնասները, որ տուեց այդ պատերազմը իւր ժամանակին, դեռ մինչև այժմ էլ թշնամութիւնը շարունակուում է այդ երկու մեծ ազգերի մէջ և սպառնում

*) Օգտուել եմ Ֆալֆ պատմաբանի «XIX դարի Եւրոպայի պատմութիւնը» գրքից և մի գրքոյից, որի վրայ հեղինակի անունը չ'կայ և որ կրում է „Франко-Германская война“ վերնագիրը:

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 20 Октября 1892 года.

Типографія М. Бархударова, Москва, Мясницкая, д. нас. Абанова.

է աշխարհին՝ պատճառ դառնալ մի աւելի ևս արիւնացեղ ու խայտառակ պատերազմի: Աղջաս և Լօթարինգիանահանգները, որ Գերմանիան իբրև յաղթող խլեց Ֆրանսիայից, կռուածաղիկ են դարձել երկու լուսաւոր ազգերի մէջ, չեն թողնում, որ նրանք ձեռք ձեռքի տուածառաջ մղեն մարդկային յառաջաղիմութիւնը, և ստիպում են նրանց ժողովրդի երիտասարդ մասն ու արիւն քրտինքով վաստակած կօպէկները զոհ բերել այն նոր Բաալին, որ կոչուում է միլիտարիզմ:

Ֆրանս-գերմանական պատերազմի խայտառակութիւնը համարեա ամբողջապէս (Եթէ չ'հաշուենք յաղթող գերմանացիների բարբարոսութիւնները) ընկնում է Ֆրանսիայի այն ժամանակուայ ասլօրինի կայսր Նապոլէօն III-ի վրայ, որի անուան հետ կապուած են այնքան խայտառակ գէպքեր որքան զուցէ կապուած չեն եղել ոչ մի պատմական գործչ անուան հետ:

Նապոլէօն III-ի անսուրբ աւաղանում մլրտուած կայսրութիւնը քսանամեայ անարդ գոյութիւնից յետոյ մեռաւ խայտառակ մահով: Սկսուեց այդ կայսրութիւնը 1851 թ. գեկտեմբերի 2-ի պետական յեղաշրջումով (coupr d'état): 1848 թուի փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ երկրորդ հասարակապետութեան նախագահ ընտրուելով, Նապոլէօն III-ը դաւաձանեց ազգին հասարակապետութեամբ կայսրութիւնը բռնութեամբ ու խաբէութեամբ կայսրութիւն գարձնելով: 1851 թ. գեկտեմբերի 1-ի գիշերը լցու 2-ը նա պատուիրեց ձերբակալել այն մարդկանց, որոնք կարող եին զիմաղրութիւն ցոյց տալ իւր մտածած ծրագրի իրաղործմանը (ի թիւս այլոց և պարլամենտական հակառակ կուսակցութեան զլխաւորներին): Յետոյ նա յայտնեց, որ Ազգային ժողովը ցլուած է և զօրք ուղարկեց, որ ըրջապատելով պարլամենտափ շինութիւնը ոչ մի պատգամաւորի ներս չէր թողնում: Մի քիչ անցած նա

իրան կայսր Հռչակեց և խաբեայութեան ու Ճնշումների միջոյով ստացաւ ժողովրդի հաւանութիւնը:

Զգալով որ իւր սաբերի տակի հողը շատ անհաստատ է, Նապոլէօն III-ը անձնատուր եղաւ արկածախնդիր քաղաքականութիւնն՝ յուսալով ֆրանսիական ժողովրդին զբաղեցնել ու շացնել արտաքին պատերազմների աղմուկով ու յաղթութիւնների փայլով: Սկզբում բախտը ժպտում էր դաւաձանին, բայց վերջապէս շրջուեց բախտի անիւր և կործանուեց Նապոլէօն III-ի բռնտկալութեան՝ ցեխից շինած ու արիւնի շաղախով ամրացրած աշտարակը: Պատմական նեմեզիզայի գերը այս անգամ վիճակուեց Ֆրանսիայի հարեան, այն ժամանակ գեռ և ոչ առաջակարգ, պետութեանը—Պրուսիային:

Բազմաթիւ մեծ ու փոքր պետութիւնների բաժանքաժան եղած Գերմանիան սկսել էր զգալ իւր ազգային միութիւնը և այդ զիտակցութիւնը քանի զնում զօրտնում էր: Շարժման վլուխ կանգնած էր Պրուսիան, առաջ մի նշին պետութիւն, որ շնորհիւ իւր մի շաբք իրար յաջորդող տաղանդաւոր գահակալների զօրացել էր և իւր յառաջադիմական ոգով զրաւել էր ընդհանրապէս գերմանացիների համակրութիւնը: Նապոլէօն III-ին զուր չէր զալիս այդ: Իբրև կեղծ ազգասէր, նա՝ փոխանակ աշխատելու զօրացնել իւր ազգը՝ Ճնշում էր նրան, բայց միենցին ժամանակը պատրուակ բռնելով իւր ազգի օգուար ձգտում էր թուլացնել իւր հարեաններին: Մի նշին առիթ գտնելով (Սպանիական գահաժառանգութեան հարցը) նա պատերազմ յայտնեց Պրուսիային և զրանով իրան մահուան դատավճիռ կարդաց: Այդ պատերազմի ժամանակ գտաւածան բռնակալի սիստեմի բոլոր հետեանքները պարզ երևացին և ցոյց տուեցին ամբողջ աշխարհին, թէ որքան անմիտ էր «փոքրիկ Նապոլէօնը», որ Ճնշելով ազգը կտրում էր այն ճիւղը, որի վրայ ինքը նստած էր:

Այժմ առած է դարձել ասել, թէ Ֆրանս-պրուսական պատերազմում յաղթեց պրուսական ժողովրդական ռւսուցիչը: Եւ իրաւ պրուսական կառավարութեան հոգ-սերը ժողովրդական լուսաւորութեան մասին՝ շատ մեծ նշանակութիւն ունեցան պատերազմի հետևանքի համար: Գերմանացի ոչ միայն զօրապետները, այլ և հասարակ զինուորները հասկանում էին, որ իրանք կոռուում են իրանց ազգային միութեան համար ընդդէմ օտարի, որ ուզում է արգելք լինել այդ միութեանը, և կոռուում էին ողերուած կերպով, կոռուում էին համերաշխ կերպով, այնպէս որ ամբողջ գերմանական զօրքը շարժուում էր մի հոգի մի կամք ունեցող մարմնի նման: Պրուսացոց միւս առաւելութիւնն այն էր, որ նրանք բոլորովին պատրաստ էին պատերազմի համար: Հանձարեղ դիւանագէտ Բիսմարկը, որ յետոյ իւր անուան վրայ այնքան բծեր քցեց իրբեւ պետական գործիչ առաջուց հասկանում էր, որ նապոլէօն Ալիք քաղաքականութիւնը վաղ թէ ուշ պատ-ճառ պէտք է լինէր ընդհարման ֆրանսիայի ու Պրուսիայի մէջ: Նա աշխատաւմ էր պատրաստել իւր հայրե-նկքը այդ անխուսափելի պատերազմին և որքան կարելի է սերտ կապով կապել նրան գերմանական երկրորդակարգ պետութիւնների հետ: Բիսմարկի աշխատանքը զուր չան-ցաւ: Երբ որ պատերազմը սկսուեց, Պրուսիան իւր կողմն ունէր՝ իրբեւ դաշնակից, բացի հիւսիսային գերմանական պետութիւններից, որոնք իւր գերիշխանութեան տակն էին գտնուում, բոլոր հարաւային գերմանական պետութիւն-ները՝ բացի Աւստրիայից: Պրուսիայի միւս հանձարեղ Մօրտէն ջանք էր թափում իւր հայրենիքի զին-զաւակը՝ Մօրտէն ջանք էր թափում կատարելութեան հաս-ուրական կազմակերպութիւնը կատարելութեան հաս-ցնելու և իւր առանձնասենեակի խաղաղութեան մէջ կադ-մում էր ապագայում սպասելի պատերազմի ծրագիրը: Որքան պատրաստ էին այդ կողմից գերմանացիք, երեւում

է նրանից, որ 1870 թուի յուլիսի 16-ին Վիչելմ I թագաւորը հրաման տուեց շարժել զօրքը և արդէն օդու-տոսի Յ-ին 338,000 վարժ ու առողդ զինուորներ կանդ-նած էին սահմանի վրայ:

Ֆրանսիան ընդհակառակը բոլորովին անպատճառաստ էր: Միջաղելի կլինէր, եթէ այնքան տխրալի չլինէր այն փաստը, որ նապոլէօն Ալիք պատերազմ յայտնեց երկու անգամ աւելի փոքրաթիւ զօրք ունենալով քան իւր թրշ-նամիները: Ֆրանսիական կառավարութեան եղենաւոր թեթևամտութիւնը այն աստիճանի էր հասնում: Որ նա Ճիշտ չգիտէր մինչեւ անգամ իւր զօրքի քանակութիւնը: Արտաքին գործերի մինիստրը համոզուած էր, թէ պատե-րազմական մինիստրը ունի բաւականաչափ զօրք: Առհա-սարակ՝ Ֆրանսիան կառավարողները հաւատացած էին, թէ իրանք ունեն 1,200,000 զինուոր, թէ եւ ցուցակների համաձայն պէտք է լինէր 300,000, իսկ իրօք զօրքը բաղկացած էր 170,000 հոգուց: Դաշնակից՝ ոչ մի հատ չունէր նապոլէօնը, թէ պատերազմական մինիստրը հաւա-տացած էր, թէ արտաքին գործերի մինիստրը դաշն է կա-պել Աւստրիայի հետ:

Բայց այդ գեռ ոչինչ: Ֆրանսիացիք մեծ յեղափո-խութեան ժամանակ ապացուցեցին աշխարհին, որ ա-ռանց փողի, առանց կանոնաւոր պատրաստ զօրքի նրանք կարող են հրաշքներ գործել և արհամարհել միացեալ եւրոպայի ցմերը: 1870 թուին Ֆրանսիայի թուլու-թեան զինուաւոր պատճառը ազգի բարոյական անկումն էր: Այն զասակարգը, որի ձեռքում էր գտնուում կառավա-րութեան դեկը, մինչեւ ուղ ու ծուծը անբարոյականացել էր նապոլէօն Ալիք սաոր քաղաքականութեան ազգեցու-թեան տակ: Բռնակալին մօտենալու համար ոչ ընդունա-կութիւններ էին հարկաւոր, ոչ բարոյական արժանաւո-րութիւններ, այլ սարկական շողաքորթութիւն: Տաղա-

դաւոր մարդիկ ստիպուած էին լուռ ու անգործ նստել խուլ անկիւններում։ Ազգի ամենամեծ զաւակները աք-սորուած էին հայրենիքից։ Կաշառակերութիւնը և պետական գանձարանի կողոպտումը ընդհանուր երկոյթ էին դարձել։ «Պետական կարեոր պաշտօնները, ասում է Փայֆ պատմաբանը, այնպիսի մարդկանց էին յանձնուած, որոնք կարող էին ամօթից կարմրացնել շատ աւազակների»*): Երկարատև բոնակալութիւնը մեռցրել էր ժողովրդի եռանդն ու ոգեսրուելու ընդունակութիւնը։ Նապօլէօնը ինքը մոռացնել էր տուել ժողովրդին հայրենիքը բառը, աշխատելով այդ անունը փոխարինել իւր անունով և զարմանալի չի, որ ժողովուրդը դէմ էր պատենտին ու չկարողացաւ պաշտպանել իւր հայրենիքը, մինչեւ որ նապօլէօն ԱՄի անկումից յետոյ նա, թէև խցառակութեան գնով, յետ չ'ստացաւ իւր հայրենիքը իւր սիրելի, իւր վեհ հայրենիքը։ Որքան տարբերութիւն այդ ժամանակուայ և այն ժամանակուայ մեջ, երբ ֆրանսիական առաջին, գեռ նորածին, հասարակապետութիւնը պաշտպանում էր իւր հայրենիքի ազատութիւնը եւրոպական համարեա բոլոր պետութիւնների կօալիցիայի ու բազմաթիւ ներքին թշնամինների դէմ։ Մեծ յեղափոխութիւնը Բուրբոններից ժառանգութիւն էր ստացել բազմագրեան ճնշումներից ու հարստահարութիւններից աղքատութեան վերջին ծայրն հասած տէրութիւնն, երկու տարուայ սովից ուժասպառ եղած ժողովուրդ, դատարկ պետական գանձարան ու խոշոր, մեծագումար պարտքեր, քաղաքական գանձարան ու խոշոր, մեծագումար պարտքեր, քայլայուած, մերկ ու քաղցած փոքրաթիւ զօրք համարեա առանց զօրապետների (առաջ Ֆրանսիայում միայն աղնուական ծագում ունեցողները կարող էին զօրապետներ), իսկ աղնուականները բոլորը մեծ յեղափոխութեան

^{*)} Ч. А. Файфъ. Исторія Европы XIX вѣка. т. III. ст. 302.

ժամանակ փախել էին Ֆրանսիայից), և ահա այդ ժա-
ռանգութեամբ ազգային ժողովը և «Հասարակական փրկու-
թեան մասնաժողովը» յանդքնեցին դուրս գալ եւրոպա-
կան ցամաքի պետութիւնների կազմակերպուած զօրքերի
ու անդլիսական կառավարութեան, այդ նենդ Ալբիոնի, ան-
սպառ միլլիօնների դէմ, ապստամբած մի ամբողջ նահանգի
(Վանդէ) և ամէն տեղ խրտումն ու խառնակութիւն
քցող միացած ու գաղթած արքայականների ու կղերա-
կանների դէմ: Եւ այդ անհաւասար կռուում յաղթեց
Հասարակակետութիւնը, —յաղթեց, որովհետեւ ֆրանսիան
համոզուած էր, որ «25 միլլիօն ժողովրդի համար ան-
կարեի բան չ'կայ»: Բոլորովին ուրիշ բան էր նապօ-
լէօն III-ի ժամանակ, երբ չ'կար ժողովուրդ այդ բառի
բուն նշանակութեամբ, այլ կար միայն ձնշուած, անդի-
տակցական, ստրկացած ամբոխ՝ զուրկ գաղափարից և
ոգեսրութիւնից: Եւ նապօլէօն III-ի ժամանակ գերմանա-
կան ազգը յաղթեց ֆրանսիական ամբոխին: Բայց
դիմենք պատմութեանը:

Պատերազմը սկսուեց 1870 թ. օգոստոսի 2-ին: Գերմանացիների հետ սկզբից մինչև անդամ իրանց համար անսպասելի կերպով հեշտութեամբ յաղթութիւն տարան ֆրանսիացիների վրայ և անցան սահմանը: Պատերազմի աստուածը կարծես երես էր թեքել ֆրանսիացիներից: Օդոսատի 4-ից մինչեւ 18-ը գերմանացիք տարան մէկ-մէկի վրայ այնպիսի փայլուն յաղթութիւններ, ինչպէս Վեօրթի (որի ժամանակ ջախջախեցին Մակ-Մահոնի ամբողջ զօրագունդը), Շպիխերնի, Մարս-լա-Տուրի, Գրաւը-լուտի յաղթութիւնները: Գրաւը-լուտի պարտութիւնից յետոյ ֆրանսիական զօրքի հրամանատար Բաղընը փոխանակ աշխատելու նահանջել գէպի Փարիզ իւր մօտ 200,000 զօրքով քաշուեց Մեց*) ամրոցը: Գերմանացիք իս-

*) Уხցლ Գերմանիային էր պատկանում մինչև 1552 թ.: Ֆրան-

կյն սկսեցին օղակ կազմել Մեցի շուրջը ու կտրել բուրքը ճանապարհները և մի քանի օրից յետոյ բոլորովին պաշարեցին Բաղէնին: Բաղէնը առանց զիմագրութեան թոյլ տուեց, որ իրան փակեն Մեց ամրոցում: Նապօլէօն Ա-ը և Մակ-Մահոնը ծածուկ առաջ խաղացին դէպի Մեց Բաղէնին օգնելու, բայց թշնամին նկատեց այդ շարժումը և յանկարծ վրայ հասնելով Սեղան ամրոցի մօտ շրջապատեց նրանց «Հրեղէն օղակով, որի մէջ կայսրութիւնը պէտք է գտնէր իւր կորուստը» (Փայֆ): Սեպտեմբերի 1-ին նա, որ 20 տարի հրամաններ էր արձակում ոչ միայն Ֆրանսիային, այլ և Եւրոպային, խայտառակ կերպով անձնատուր եղաւ թշնամուն՝ 100,000 զօրքով: Վիլհելմ թագաւորը նապօլէօնին իբրև պատուաւոր գերու աքսոր ուղարկեց Վիլհելմնէնէ ամրոցը:

Սեղանի խայտառակութեան լուրը կայծակի արագութեամբ հասաւ Փարիզ և ցնցեց Ֆրանսիայիներին: Սեպտեմբերի 3-ին կառավարութիւնը յայտնեց ժողովրդին եղելութիւնը: Օրէնսդրական ժողովը նոյն երեկոյեան նիստ գումարեց: Ժիւլ Փաւրը առաջարկեց գահընկեց անել կայսրին: Ժողովը գերեզմանային լուսութեամբ յայտնեց իւր համաձայնութիւնը: Թիէրը և ուրիշները ուղում էին սահմանադրական միապետութիւն հաստատել, բայց մեծ Գամբետտան ժողովրդի և ազգային պահապանների զրուխն անցած մասւ ժողովը այն ժամանակ, երբ քուէարկում էին կառավարութեան ձևի հարցը, և հասարակապետութիւն հռչակեց: Ամբողջ ժողովուրդը ցնծում էր. «Կեցցէ հասարակապետութիւն» լսուում էր ամէն տեղ: Իսկոյն

սիակի թագաւոր Ճանրի IV-ը գրաւելով Լօթարինգիան տիրեց և Մետինը նախամետայ պատերազմի ժամանակ: Վեստֆալեան դաշնադրութիւնը հաստատեց այդ տիրապետութիւնը ամստեգիան:

կազմուեց «ազգային պաշտպանութեան կառավարութիւն», որի գլուխն անցաւ Տրօշիւ գեներալը: Ժիւլ Փաւրը նշանակուեց մինիստր արտաքին զործերի, Գամբետան՝ ներքին գործերի ու յետոյ նյոնպէս և պատերազմական մինիստր: «Ոչ մի ձեռք չբարձրացաւ պաշտպանելու նապօլէօնի տոհմը և կամ կայսերական հաստատութիւնները» (Փայֆ): Կայսրուհին փախաւ Ֆրանսիայից:

Նատ զժուար էր նոր կառավարութեան զրութիւնը: Յաղթական թշնամին մօտենում էր Փարիզին, իսկ Ֆրանսիան անպաշտպան էր, որովհետեւ մնացել էր առանց կանոնաւոր զօրքի: Այդ ձգնաժամին Ֆրանսիական ազգը նորից ցցյ տուեց իւր մեծութիւնը: Կայսրի ընկնելուց յետոյ ժողովուրդը իւր ձեռքն առաւ հայրենիքի պաշտպանութեան գործը և մէկ-երկու ամսում ամբողջ Ֆրանսիան զինուած՝ ոտի կանգնեց: Մինչ այդ գերմանացիք եկան պաշարեցին Փարիզը: Ֆրանսիայի մայրաքաղաքը լաւ ամրացրած էր և ունէր չորս ամսուայ չափ դիմազրելու պաշար: Ֆրանսիան գեռ չէր յուսահատուում: Համարեա ամբողջ գերմանական զօրքը ստիպուած էր անգործ մնալ՝ Փարիզն ու Մեցը պաշարած: Այդ ժամանակ շատ բան կարելի էր անել գտաւաներում: Բայց գաւառներին առաջնորդ էր հարկաւոր: Ով պէտք է լինէր այդ առաջնորդը: Ամբողջ Ֆրանսիայում ոչ ոք այնքան արժանի և ընդունակ չէր այդ զերին որքան Գամբետան, որ Փարիզումն էր և չէր կարող գուրս գալ որովհետեւ գերմանացիք բոլոր ճանապարհները բռնել էին: Սակայն ինչ խոշնդրու կարող է արգելք լինել մեծ մարդուն, երբ այդ մեծ մարդու սիրաք վառուում է հայրենասիրական սուրբ զգացմունքով, երբ այդ մեծ մարդը իւր երկաթէ կամքի բոլոր շյժով վճռել է կամ մեռնել կամ փրկել հայրենիքը: Հոկտեմբերի 7-ին Գամբետան օգապարիկով թռաւ անցաւ թշնամիների բանակի վրայով: Նա փոթորկի

Նման ընկաւ ազգի մէջ ու ամէնքին ոտի կանգնեցրեց: Այսօրի զինուորները չ'կարողացան պաշտպանել անարդուած հայրենիքը, ազատ քաղաքացիք վեր կացան փրկելու եթէ ոչ հայրենիքը ամբողջապէս գոնէ իրանց ունակու եղած պատիւը: Անմահ Գարիբալդին, որ թռչում էր մին տեղ ուր կուռում էին ազատութեան համար, իւր կամաւորներով իտալիայից օգնութեան եկաւ իւր ֆրանսիացի եղբայրներին: Ամբողջ մարդկութիւնը կսկիծով նայում էր, թէ ինչպէս մեծ ֆրանսիան թուլանում է պատերազմի սկզբում արդար, բայց վերջում բարբարոս գերմանացիների ոտների տակ և զարմանում էր այն հրդեկան ոյժի վրայ, որ ցոյց էր տալիս ֆրանսիան: Բայց ինչ կարող էր անել այդ ոյժը, երբ որ դաւածան գաւածանի յետելից հարուածներ էին հասցնում թշուառ ֆրանսիային: գաւածան նապօլէոնի ծառաները հարազատ զաւակներ չեին կարող լինել իրանց հայրենիքի համար: Մինչդեռ կազմակերպութիւնը էին գաւառական զօրքերը, յանկարծ անձնատուր եղաւ Բաղէնը և նրան պաշարող գերմանական զօրքը ազատութիւն ստացաւ արշաւելու երկրի խորքը: Դեռ Գամբետայի Փարիզաւ կատարելու եղաւ այդ պատերազմի ժամանակակից լինել (քաջ դիմադրութիւնից յետոյ) Ալլասի մայրաքաղաք Սարաստուրզը *):

Բաղէնի ամբողջ վարմունքը այդ պատերազմի ժամանակ շտահ կասկածելի էր և ցոյց էր տալիս, որ նա դա-

*) XI դարում Սարաստուրզը ազատ կայսերական քաղաք էր և պատկանում էր Գերմանիային մինչև 1681 թ. երբ այդ քաղաքը ապատկանում էր Գարիբալդին մինչև 1870 թիւը Ալլասացիք բոլորովին ֆրանսուան ֆրանսիացիները: Մինչև 1870 թիւը Ալլասացիք բոլորովին ֆրանսուան էին և իրանց գերմանացի չեին ծանաչում: Ալժմ էլ նրանք սիահերթ էին և իրանց կամքին թողնեն կ'միանան ֆրանսիային:

ւաճանում է իւր հայրենիքին: Նա, ինչպէս ասացինք, առանց զիմալրութեան թոյլ տուեց որ իրան պաշարեն գերմանացիք, մինչդեռ ունէր բազմաթիւ զօրք, որ կարող էր մրցել այն ժամանակուայ ամէնալաւ զօրքերի հետ: Ոչ մի նշանաւոր փորձ գուրս գալու ամրոցից և գնալու օգնութեան ոտնատակ տուած հայրենիքին՝ նա չարեց, որովհետեւ նա չէր մտածում իւր հայրենիքի մասին, այլ սկզբում աշխատում էր հնարք գտնել ձեռք քյել ֆրանսիայի թագը, իսկ յետոյ ձգտում էր վերականգնեցնել նապոլէոնի կայսրութիւնը: Բաղէնը զաւածանեց իւր հայրենիքին՝ երկար ժամանակ անգործ պահելով 200,000-ի չափ զինուոր և վերջը այդքան զօրքով ու անառիկ ամրոցում անձնատուր լինելով: «Մի քիչ յետոյ Բաղէնին ենթարկեցին զինուորական զատի, մեղադրելով, թէ չի կատարել իւր պարտականութիւնները, և զատապարտեցին մահուան պատմի: Այդ զատավճրուր ի կատար չածեցին, բայց եթէ կայ մահից վատ խայտառակութիւն, այդպիսի խայտառակութիւն պէտք է կապուած լինի ընդմիշտ Բաղէնի անուան հետ» (Ֆայֆ):

Գաւառներում կազմուած զօրքը կոռուում էր անձնազութեամբ. Փարիզը զիմալրում էր հերոսաբար. բայց յաղթել թշնամուն և հեռացնել նրան ֆրանսիայից անհնար էր: Փարիզում սկսուեց սաստիկ սով: Սկսեցին ամէն տեսակ կենդանիներ ուտել: Բնակիչներից 40 հազարի չափ մեռել էին սովից ու հիւանդութիւններից: Մահուան ոզին սաւառնում էր Փարիզի վրայ և ամէն օր նորանոր զոհեր էր տանում: Թշնամու ումբակօծութիւնից ու սովից բոլորովին ուժասպառ եղած Փարիզը վերջապէս անձնատուր եղաւ և 1871 թ. յունուարի 28-ին զինադարձը պայմաններ ստորագրեցին, որպէս զի այդ զինադարձի ժամանակ ֆրանսիական ժողովուրդը ազգային ժողովը ընտրէր և այդ ժողովը վճռէր, թէ արդեօք պէտք է շարու-

նակել պատերազմը թէ ոչ և եթէ դաշն կապել՝ ի՞նչ
պայմաններով։ Ազգային ժողովը փետրուարի 12-ին բա-
ցեց իւր նիստերը Բօրդո քաղաքում։ Թիէրը միաձայն
ընտրուեց վարչութեան գլխաւոր։ Նա Բիսմարկի հետ
կազմեց դաշինքի պայմանները որով ֆրանսիայիք զե-
ջում էին Գերմանիային Ալզաս ու Լոթարինգիա նահանգ-
ները և յանձն էին առնում վճարել 5 միլիարդ ֆրանկ
պատերազմական տուրք (պրուսացիք 6 միլիարդ էին
պահանջում)։ Բացի այդ Բիսմարկը պահանջում էր կամ
Բէլֆօրն էլ զեջել կամ թոյլ տալ որ պրուսական
Փարիզ մոնէր Փարիզ մինչև այդ պայմանների Ազգային ժո-
ղորքը մոնէր կողմից ընդունուելը։ Թիէրը ընտրեց վերջինը։ Մար-
տի 1-ին 36 հազար գերմանացի զինուոր մատան Ելսեան
դաշտերը (զինադադարի սկզբից Փարիզի ամրոցները յանձ-
նուել էին գերմանացիներին), բայց նոյն օրը Բօրդոի Ալ-
զային ժողովը հաստատեց դաշինքի պայմանները և 48
ժամից յետոյ յաղթողները դուրս եկան Փարիզից ու
քիչ-քիչ ֆրանսիայից։

Սակայն Ֆրանսիային դեռ մնում էր կրել ներքին
եղայրասպան պատերազմի դառնութիւնները։ Մի քանի
ամիս Վերսալիք ու Կոմմունարները անխնայ կոտորում
էին միմեանց ու աւերում էին Փարիզը։ Կատաղած ֆրան-
սիան յուղարկաւորում էր նապոլէոնի կայսրութիւնը
հրդեհներով, կոտորածներով, բանտարկութիւններով, աք-
սորներով, կախաղաններով։ . . .

Այդպէս տանջուում էր ֆրանսիան քաւելով իւր
մեղքը, որ 20 տարի առաջ անտարբերութեամբ թոյլ
էր տուել արկածախնդիր բռնակալին զողանալ ազգային
ազատութիւնը և վերջ տալ հասարակապետութեանը։
Տանջանքի բովեց ֆրանսիան դուրս եկաւ նորից իբրև
ինքնազիտակից ազգ և ոչ հօտանման ամբոխ։ Հասար-
կապետութեան դրոշը նորից ծածանուեց ազատ ֆրան-

սիայում։ Այդ հասարակապետութիւնը, թուով երրորդը,
մինչև այժմ էլ շարունակուում է և վերջերքս արքայա-
կանները արդէն ձեռք են վերցնում իրանց ցնորամիտ
ձգտումներից։ Նապօլէոնների դարը կարծես անցել է
ֆրանսիայում։

Տ. ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ.



ԴՐՈՅԱԿԻՐԸ.

(ԱԼՖՈՆՍ ԴՕՇԵԻ)

(Թարգմ. Փրանսերէնից)

1.

Մեր զօրագնդերից մէկը կոռուում էր երկաթուղու հողաթմբի զառիվայրի վրայ՝ ճակատ առ ճակատ պլուսական ամբողջ բանակի դէմ, որ կանգնած զիմացի անտառի առաջ՝ կարծես հրացանաձգութեան նշան էր ընտրել այդ մի բուռն ֆրանսիական զինուորներին։ Հրացանաձգութեան ասպարէզը ութսուն մէտրի տարածութիւն էր։ Սպաները գոռուում էին՝ «պառկէք...», բայց ոչ ոք չէր ուղում հնազանդել և անվեհեր զօրագունդը մընում էր կանգնած՝ իւր զրօշակի շուրջը պատաժ։ Վերնում էր կանգնած՝ իւր զրօշակի մարդկանց ալէնիրի այդ ընդարձակ հորիզոնում մարդկանց այդ ալէնիրի այդ ընդարձակ հորիզոնում մարդկանց այդ ալէնիրի կոծուղ ու միի մէջ կորած ամբոխը կարծես նախիր լինէր՝ բայց դաշտում յանկարծակի բարձրացած սարսափելի կարկտաբեր մրրկից բոնուած։ Եւ յիրաւի զառափակի վրայ կարկուտ էր տեղում գնտակների կարուիկայրի վրայ կարկուտ էր տեղում գնտակների կար-

կուտ։ Կոռուում էր միայն հրացանների տրաք-տրաքոցը, ներքե գլորուող զինուորների թիթեղէ պնակների խուլ շառաջը և ճակատատեղի մի ծայրից մինչեւ միւս ծայրը յետ ու առաջ սլացող գնտակների վզվզոցը, որ կարծես մի մեծաշնչիւն ու չարագուշակ նուազարանի ձգուած լարերի գողգողալուց էր յառաջանում։ Երբեմն երբեմն հրաձգութեան հողմից ծածանուող զրօշակը, որ զրօշակիրը միշտ զինուորների զլուխներից բարձր էր բռնած պահում, աներեւութանում էր ծխի մէջ այն ժամանակ լսուում էր մի աշեղագու ու խրոխտ ձայն, որ ծածկում էր հրացանաձգութեան որոստ և վիրաւորների խըռխուոցն ու անէծքը, «գէպի զրօշակը, տղերք, գէպի զրօշակը...» և իսկոյն սպաներից մէկը ստուերանման քցում էր իրան այդ շառագոյն մշուշի մէջ և հերոսական զրօշակը յարութիւն առնելով նորից ծածանուում էր օդում։

1002
5280

Քսան երկու անգամ վայր էր ընկել զրօշակը... Քսան երկու անգամ մեռնող զրօշակի ձեռքից գուրս պրծած ձողը գեռ տաք-տաք անցել էր յաջորդի ձեռքը ու խոնարհուած զրօշը գետնին չ'զիպած նորից բարձրացել էր կոռուորների զլխավերեւում և երբ որ՝ արել մայրմանելուց յետոյ՝ զօրագնդից մնացած մի բուռն զինուորները սկսեցին կամաց-կամաց յետ նահանջել, զրօշակը փալս էր գարձել և գտնուում էր յիսնապետ հօնուասի ձեռքում, որ այդ օրուայ քսաներէքերորդ զրօշակիրն էր։

2.

Յիսնապետ հօնուասը մի բռի զինուոր էր. նա հազեւ էր կարողանում իւր անունը ստորագրել և քսան տարի ծառայել էր փոխ-սպայի աստիճանը ստանալու համար։ Բնկեցիկ, պատի տակից գանուած երեխայի տառապանքներով լի մանկութեան հետքը, զօրանոցի բթա-

մտացնող ազդեցութիւնը պարզ նկատուում էին նրա նեղ ու յամառ ձակատից, պայուսակի տակ կուցած մէջքից ու հասարակ զինուորին յատուկ անդիտակցական քայլուածքից: Բացի գրանից նա մի քիչ կակազում էր, բայց զրօշակիր լինելու համար պէտք չի անպատճառ ծարտար լեզու ունենալ: Հէնց նոյն, կոուի երեկոյեան գնդապիտն ասաց նրան, «քո ձեռին է զրօշը, թող հէնց քո ձեռին էլ մնայ, կարիձ կաց, լաւ պահիր մեր զրօշակը», և նրա վառօդից ու անձրեից բոլորովին խունացած պատերազմական աղքատիկ վերարկուին՝ բանակի գինեվաճառ կինը ձեռաց կարեց հարիւրապիտի նշանածովը:

Այդ միակ պարծանքն էր խեղձի՝ ամբողջապէս նուաստութեան մէջ անցրած կեանքում: Մի ակնթարթում նրա մէջքը, այդ կոր, հասարակ-զինուորի մէջքը, շիտկուց: Այդ խեղձ արարածը, որ սովորաբար կռացած, զլխակոր էր ման զալիս, այնուհետեւ ստացաւ զոռող կերպարտնք, այնուհետեւ զլուխը միշտ բարձր էր պահում՝ աչքերը յառած զրօշակի ծածանուող շորին, որպէս զի կարողանար նրան բոլորովին ուղիղ ու բարձր պահել, բարձր՝ մահից, դաւաճանութիւնից, փախուստից:

Պէտք էր տեսնել, թէ որքան երջանիկ էր զգում իրան հօնուսը ձակատամարտի օրերը, երբ երկու ձեռքով պինդ բռնած պահում էր զրօշի կաշուապատ ձողը: Դժուար թէ տեսած լինէք որ և է մարդու այդ աստիճան բախտաւոր զրութեան մէջ: Նա չէր խօսում, չէր շարժուում: Նա այնպիսի երկիւղածութեամբ, խորհրդաւոր լրջութեամբ էր պահում զրօշակը, կարծես պատարագիչ քահանայ լինէր՝ սրբութիւնը ձեռքին բռնած: Նրա կեանքը, նրա բոլոր ոյթը այդ ժամանակ ամփուուում էր՝ զնտակոծուող գեղեցիկ, ոսկեթել փալասի ձողը պինդ սեղմող մատներում և խիզախութեամբ լի աչքերում, որոնք ուղիղ նայում էին պրուսացիներին՝ կար-

ծես ասելով նրանց—«թէ քաջ էք, փորձեցէք, եկէք զրօշակը խլէք ձեռքիցս»...

Ոչ ոք չփորձեց, մինչեւ անգամ մահը: Բոռնից ու Գրաւըլուտից, այդ ամէնաարիւնահեղ ձակատամարտներից յետոյ զրօշակը հեռանում էր ամէն տեղից զզզզուած, ծակծկուած, ծակերի շատութիւնից ցանցի ձեւ ստացած, բայց միշտ ծեր հօնուսի ձեռքում:

3.

Եկաւ սեպտեմբեր ամիսը. Բաղէնը փակուեց Մեցում՝ պաշարուած պրուսացիներից: Օր օրի յետևից անցնում էր առանց կոուի, առանց հրաձգութեան. շարունակ անձրւ էր տեղում: Թնդանօթները ժանգուում էին չգործածուելոց, աշխարհիս ամէնաքաջ զինուորները վհատուել ու թուլացել էին անդործութիւնից, պաշարի պակասութիւնից ու տեղեկազուրկ մնալուց և իրանց խաշաճեց ցցած հրացանների տակ կոտրուում էին տենիզից ու տաղտիւթիւնից: Զօրապետ թէ զինուոր՝ բոլորը յուսահատուել էին, միայն հօնուսն էր մնացել որ դեռ հաւատում էր: Եռագյուն փալասը նրա համար ամէն բանի տեղ բռնում էր և, քանի որ այդ փալասը նրա կողքին էր, նրան թուում էր թէ իրանք զեռ ոչինչ չեն կորցրել: Դժբախտաբար ծակատամարտ չէր լինում և զնդապետը այդ պատճառով զրօշակը պահում էր իւր մօա՝ Մեցի մի արուարձանում: Խեղձ հօնուսը կարծես՝ երեխան ծծմօր տուած մայր լինէր: Գիշեր-ցերեկ զրօշակը մտքիցը դուրս չէր գալիս: Կարուոր շատ որ զօռում էր, էլ չէր կարողանում զիմանալ վազէվազ զնում էր Մեցի արուարձանը: Նատ բան պէտք չէր նրան. միայն տեսնէր իւր սիրելի զրօշակը միւնոյն տեղում, հանդիսա՝ պատին գէմ տուած ու սրտի կարօտն առնէր, այդ էլ բաւական էր, որ նա այնտեղից

վերադառնար քաջալերուած ու համբերութեամբ լի սրտով,
բերելով իւր հետ իւր թրջուած վրանը ուրախ յնորքներ,
որոնց ժամանակ նա երեակայում էր ճակատամարտներ,
յաղթական արշաւանքներ, որուստացոց պատնէների վրայ
ծածանուող եռագոյն դրօշներ:

Մարեշալ Բաղէնը իւր կարգադրութեամբ օդը յնպե-
ցրեց նրա յնորքները: Մի առաւօտ հօնուսը քնից զարթ-
նելով տեսաւ, որ ամբողջ բանակն իրար է անցել զին-
ուորները խումբ - խումբ կանգնած, սաստիկ զայրացած
ասում - խօսում, միմեանց զրգուում էին՝ կատաղի աղա-
ղակներ արձակելով և բռունցքները սպառնալու ձեռվ
չեին արգելում չեին լոեցնում նրանց... Նրանք մի կողմ
քաշուած ման էին գալիս գլխակոր՝ կարծես ամաչելիս
լինէին իրանց զինուորներից: Եւ իրաւ՝ ամաչելու բան էր:
Մի քիչ առաջ կարգացել էին հարիւր յիսուն հաղար
լաւ զինուորուած ու դեռ առօյդ զինուորների առաջ մարե-
շալի կարգադրութիւնը, որ նրանց մատնում էր թշնա-
մու ձեռքը առանց կոռուի, առանց դիմալրութեան: «Իսկ
դրօշակները», հարցրեց հօնուսը սպառնելով... Դրօշակ-
ները միւս բաների, հրայտաների, թնդանոթների, վրան-
ների, ամէն, ամէն բանի հետ յանձնուած էին արդէն...
«Աս... Աս... Ասոծու կրակը նրանց գլխին», կակա-
զելով ասաց խեղձ զինուորը, փմիս չեն կարող տիրա-
նալով... ու վաղ տուեց զէպի արուարձանը:

4.

Սյնտեղ էլ սաստիկ իրարանցում կար, աղային
գունդը, քաղաքայիք, մօքիները յուզուում, գոռգոռում

էին: Կատաղած պատգամաւորութիւններ իրար յետելից
անցնում - զնում էին հրամանատարի մօտ: Բայց հօնուսը
ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր լսում: Նա ինքնիրան խօ-
սելով զնում էր արուարձանի ծանապարհով:

Լաւ, լաւ... պայշակը ձեռքից խիլ... տայ պրուս-
սացիներին: Ինչպէս կարելի է: Ինչ իրաւոնք ունի: Թող
իւր սեփական բաները տայ պրուսսացիներին, իւր ոսկե-
զօծ կառքերը, Մեքսիկայից բերած արծաթէ ամանները:
Դրօշակը նրանը չե, իմն է... իմ պատիւն է, ես թյլ չեմ
տալ որ նրան դիմացն»:

Անկապ էին հօնուսը խօսքերը. վաղելիս խօսելն ու
բնական կակազութիւնը աւելի կցկուուր էին դարձնում
նրա խօսքերը, բայց անիմաստ չեին նրանք: Հօնուսը չէր
կարողանում լաւ արտայայտել իւր միտքը, բայց նրա
վիսում արդէն ծագել էր մի միտք, մի որոշ, հաստատ
միտք, — վերցնել դրօշակը, տանել, ժողովել զօրագունդը
և իրան հետեւ ցանկացողների հետ անցնել՝ ոտնատակ
տալով պրուսսացիներին:

Բայց երբ որ տեղ հասաւ, սկի չ'թողեցին էլ որ
ներս մտնի: Գնդապեար, որ նոյնպէս կատաղութիւնից չէր
իմանում ինչ անի, չէր ուզում ոչ պի երեսը տեսնել...
Բայց ինչ կարելի էր հասկացնել հօնուսին:

Նա գոռգոռում էր, հայհոյում, հրում էր պահապա-
նին: «Իմ դրօշակը... թող տան իմ դրօշակը...» Վերջա-
պէս պատուհաններից մէկը բացուեց.

— Այդ գո՞ւ ես, հօնուս:
— Այտ, գնդապեա, ես. . .
— Բոլոր դրօշակները զինարանումն են... գնա այնտեղ,
քեզ ստացագիր կ'տան. . .
— Ստացագիր... ինչի՞ս պէտքն է ստացագիրը...
— Հրամանատարն է այդպէս կարգադրել...
— Բայց, գնդապեա. . .

— «Զեռք քաշիր ինձանից. . .» և պատուհանը նորից փակուեց:

**Ծերունի Հօռնուսը կանգնած տեղում հարբածի նման
Ճօճուռում էր:**

«Ստացագիր... ստացագիր...» կրկնում էր նա մե-
քենաբար... Վերջապէս նա տեղեցը շարժուեց մի բան
միայն գիտակցելով, այն է որ դրօշակը զինարանումն է
և որ նա պէտք է յետ ստանայ իւր դրօշակը թէկուզ
ինչ էլ լինի:

5.

Զինարանի գարբասի գուռը երկու կրունկի վրայ բաց
էին արել ձանապարհ տալու համար պղուսսացոց սայլե-
րին, որոնք բակում շարուել՝ սպասում էին: Հօնուսը որ
բակը մտաւ՝ սարսուռ անցաւ ամբողջ մարմնով: Մնա-
ցեալ բոլոր զրօշակիրները, մօտ յիսուն - վաթսուն սպայ,
արդէն այնտեղ էին՝ տխուր - տրառում, լուռ ու մունջ:
Այդ՝ անձրեի տակ շարուած մոայլ կառքերն ու նրանց
յետելից կանգնած զլխաբայ մարդկանց տեսնողը կասեր
թէ թաղման հանդէս են կատարում:

Մի անկիւնում ցեխոտ սալպյատակի վրայ իրաբ
գլխի խառն ի խուռն քյած էին Բազէնի զօրքի բոլոր վրա-
շակները: Մարդու լացը գալիս էր որ տեսնում էր այդ վա-
գոյներով մետաքսի ջնցոտիքը, այդ ոսկեթել ծոպերի կը-
տորտանքն ու քանդականնկար զրօշաձողերի բեկորները, այդ
փառաւոր զրօշակները՝ քյած գետնին, անձրեսի տակ, ցե-
խակոլոյ: Մի սպայ մի առ մի վերցնում էր այդ զրօշակ-
ները ու տալիս էր բարձելու սայլերի վրայ, և ամէն ան-
գամ երբ նա մի որ և է զօրագնդի անուն տալիս էր՝ ա-
ռաջ էր գալիս այդ զօրագնդի զրօշակիրը ստացագիր ստա-

Նալու Երկու ձգուած, անզգայ պրուսացի սպայ վերա-
հսկում էին:

Եւ այդպէս հեռանում էիք դուք, ով փառաւոր,
նուիրական պատառներ, ցոյց տալով ձեր պատուածք-
ները, թե երր կոտրած թոշունի նման տխուր-տրտում
աւելի լով գետինը: Դուք հեռանում էիք ամօթով իբրև
ապականուած սրբութիւն և ձեզնից ամէն մէկը տանում
էր իւր հետ Փրանսիայից մի փոքր մաս: Տեռաւոր, երկա-
րատե արշաւանքների արեւ դեռ մնացել էր ձեր խունա-
ցած ծալքերում: գնտակների թողած նշաններում դուք
պահում էիք՝ գնտակոծուող զրոշի տակ յանկարծամահ
եղած անցայտ հերոսների յիշատակը. . .

«Հոռնուս, քո հերթն է... Քեզ կանչում են... զնա՝ առ ստացագիրդ...»

Նրա շատ պէտքն էր ստացագիրը:

Դրօշակը, իւր դրօշակը, իւր գեղեցիկ, նահատակուած դրօշակը առաջին զրած էր... Նա նայում էր դրօշակին ու նրան թուում էր թէ դեռ երկաթուղու հողաթմբի վրայ է. Նա լսում էր գնտակների վզվզը, ջախջախուող պնակների շառաչիւնը և գնդապետի աղաղակը, «դէպի դրօշակը, աղերք...» Տեսնում էր, թէ ինչպէս մէկմէկի յետելից գետնովն են զիազում քսան երկու դրօշակակիր, ինչպէս ինքը քսաներկուերդից յետոյ թոշում է առաջ, բռնում պահում է խեղճ դրօշակը, որ Ճօճուում էր մեռնող դրօշակի բազկի թուլութիւնից: Ե՞հ, այդ օրը նա երգուել էր պաշտպանել պահել նրան մինչև մահուան ըսպէն: Իսկ այժմ... .

Այդ որ միտքն եկաւ, արիւնն աչքերը կոխեց: Հարբածի պէս, գմի նման յարձակուեց նա պլուսացի սպայի վրայ, խլեց ձեռքիցը իւր անդին զրօշակը ու պինդ բռնեց երկու ձեռքով, յետոյ փորձեց նորից բարձրացնել՝ բարձր, ուղիղ, գոռալով «Դէպի դրօ...», բայց ձայնը դէմ

առաւ բգումը, կտրուեց: Նա զգաց, որ ձողը տատանուում, դուրս է պրծնում ձեռքիցը: Այդ թուլամորթ օղում, այդ մահաշունչ օղում, որ ծանրանում է անձնատուր եղած քաղաքների վրայ, դրօշակները եւ չեն կարող ծածանուել, ոչ մի անվեհեր սիրտ չեր կարող բարախել... Եւ ալեսոր հօնուուր կայծակահարի նման գետնովը դիպաւ:



ԿՈԼՄԱՐԻ ԴԱՏԱՀՈՐԻ ՏԵՍԻԼՔԸ

(Ա. Փ. Օ. Ն. Ս. Դ. Օ. Գ. Ե.)

(Թարգմանութիւն Գրանսերէնից)

Աշխարհքումն Կոլմարի դատաւոր Թոլլինդէրից բախտաւոր մարդ չ'կար, քանի որ նա զեռ երդում չ'ը կերել հաւատարիմ հպատակ լինել Վիլհելմ կայսրին և գալիս կը դատարան՝ հաստ փորով, կարմիր շրժունքներով, երեքծալ բօխախով ու պաշտօնական դիմարկը կողքահան դրած:

Նա այնպէս էր նստում տեղը՝ կարծէս մարդումն ասում էր, «Օխայ, ի՞նչ լաւ կ'ընեմ», ու մարդու քէֆ էր գալիս տեսնելիս, թէ ինչպէս էր նա ձգում գեր ոսները ու թաղուում իւր աշազին բաղկաթոսի մէջ: Ինչ լաւ էր զգում նա իրան՝ այդ բաղկաթոսի մէջ դրած զսկապահ ու փափուկ կաշուէ շրջանակի վրայ, որի շնորհիւ նա, չնայելով երեսնտմեայ նստական պաշտօնավարութեանը, դեռ պահպանել էր իւր ուրախ - զուարթ բնաւորութիւնն ու երեսի թարմ գյոնը:

Խեղճ Թոլլինդէր:

Հենց այդ կաշուէ շրջանակը նրա տունը քանդեց: Նա իրան այնքան լաւ էր զգում այդ բարձի վրայ, որ

աւելի լաւ համարեց պրուսսացի դառնալ քան տեղեցը շարժուել: Վիլհելմ կայսրը ասաց՝ «տեղներումդ նստած գումարէք, պարոն Թոլլինգէր», և Թոլլինգէրը մնաց տեղացէք, պարոն Թոլլինգէր»: և աշա նա վարում է այժմ Կոլմարի դատարանի խորհրդական անդամի պաշտօնը ու դատում է յանուն նորին Բերլինեան Մեծութեան:

Նրա շուրջը ոչինչ չի փոխուել: Նոյն չոր ու ցամաք միակերպ դատավարութիւնը, նոյն դահլիճը՝ շատ նստելուց փայլել սկսող նստարաններով ու լերկ պատերով, նոյն վաստաբանների բլբլցը, բարձր ու վարագոյրանոյն՝ վաստաբանների բլբլցը, բարձր ու վարագոյրանոյն՝ մեծ ու փոշոտ, բազկատարած ու գլխակոր խաչելունոյն՝ մեծ ու փոշոտ, բազկատարած ու գլխակոր խամարի թիւնը: Պրուսիայի ձեռքն անցնելուց յետոյ Կոլմարի դատարանը իւր յարզը չի կորցրել — ատեանի խոլքում էլի առաջուայ պէս կայսրի կիսարձան կայ դրած... Ա.մէն բան տեղն է, բայց Թոլլինգէրը իրան այնպէս է զգում որ տեղահան արուած լինի: Շատ է կողէկող ընկում բազկաթուի մէջ, ինչքան ուժումը կայ թաղուում՝ մէջը, բայց զուր, էլ առաջուայ քաղցր նինջը չի իջնում նրա փրայ, իսկ եթէ հազարից մի անդամ քունը տանում է, զարհութելի երազներ է տեսնում քնած ժամանակ. . .

Տեսնում է Թոլլինգէրը, որ ինքը մի բարձր սարի վրայ է... Ի՞նչ է շինում նա այդտեղ՝ մէս-մենակ, դատաւորի պատմուածանը հազին, նստած իւր ահազին բազկաթուի վրայ՝ այդ բարձրաբերձ սարի զլիին, ուր բազկաթուի վրայ՝ այդ բարձրաբերձ սարի զլիին, ուր բազի ծըռըզած ծառերից ու մժեղների պարերից ոչինչ չի երեսում... Թոլլինգէրը ինքն էլ չի իմանում: Նա սպառում է զարգանդած, սառը քրախնքը կոխում է մարմինը: Հունոսի այն ափից, նվարցվալի՝ եղեինների յեաելց չունոսի այն ափից, նվարցվալի՝ եղեինների յեաելց գուրս է զալիս արեգակը՝ ահազին ու կարմիր, և քանի գուրս է զալիս արեգակը՝ ահազին ու կարմիր, բարձրանում է արեգակը երկնակամարում՝ ներքեռում, բարձրանում է արեգակը երկնակամարում՝ ներքեռում, թանի ու Միւնստերի հովիտներում, Ալզասի մի ծայրից

մինչեւ միւս ծայրը՝ բարձրանում է մի խտանաշփոթ աղմուկ, խլացնող ստնաձայն ու կառքերի դղբգոց, որ հետզհետէ սաստկանում ու մօտենում է, և Դոլլինգէրի սիրալը ձմրուում է: Մի քիչ յետոյ Կոլմարի դատաւորը տեսնում էնա, որ սարի լանջով բարձրացող երկար ու օճապայտ ծանապարհով գալիս է դէպի իւր կողմը մի սգաւոր կարաւան, որի առւտր չի երեսում, — Ալզասի բոլոր բնակիչները ժամագիր են եղել ժողովուելու Վօգեզ լեռների այդ անցքում, որ հանդիսաւոր կերպով ու աշխարհախումբ գաղթեն իրանց հայրենիքից:

Սուաջից գալիս են երկ-երկու լուծ եղներով երկար սայլեր, — այն երկար ու վանդակաւոր սայլերից, որ զիւղացիք հունձի ժամանակ պրկէ-պրունկ բարձում են խրձերով, — որոնց վրայ գաղթականները այժմ բարձել են իրանց կահ-կարասիքը, իրանց տան մէջը ու իրանց գործիքները՝ հետները օտար երկիր տանելու համար: Տանում են նրանք իրանց հետ իրանց բոլոր ունեցած-չունեցածը, ահազին մահճակալներ ու պահարտներ, սարք ու շորեղին, տաշա ու ծախարակ, երեխանների փոքրիկ աթոռներ ու պապենական բազկաթուներ, — դարեսոր նշխարքներ, որ տեղահան էին արել իրանց խորշ ու անկիւններից և որոնցից Ճանապարհի քամին թօթափում, ցիր ու ցան էր անում հայրենական օջաղի նուիրական փոշին: Տուն ու տեղով են գաղթում Ալզասիք: ամբողջ տներ են բարձած սայլերի վրայ, որոնք անքալով ու ծոնչալով են շարժուում: Եղները զժուարութեամբ են քաշում սայլերը, — կարծես գետինը կալչում է անիւններից ու քաշում պահում է, կարծես ցաքանների, արօնների, բրիչների ու փոցերի վրայ մհացած չոր հողի կոշտերը բեռը աւելի ծանրացնում են, կարծես այդ բոլոր բաները արմատ են քցած եղել Ալզասի հողում և այժմ նրանց արմատախիլ են արել: Մայլերի յետեկից գալիս է լուռ ամբո-

խը. — մեր ու մանուկ, հարուստ - աղքատ, սկսած եռանկիւնի զիտարկաւոր ալեոր ծերուկներից, որոնք դողդողալով յենուում են գաւաղանների վրայ, մինչև շէկ, գուղբահեր աղաները, — սկսած անդամալոյժ տատից, որին կտրիճ թռոները ուսներին դրած տանում են, մինչև ծծի երեխաները, որոնց՝ մայրերը խտած սեղմում են կուրծքներին. առողջ ու տկար, առօդ ու թոյլ թէ նրանք, որ միւս տարի զինուոր են գնալու, թէ նրանք, որոնք մասնակցել են վերջին սոսկալի պատերազմին, — խեղանդամ ասպազէններ, որոնք քաշ են դալիս փայտեր դրած կոնատակերին, հալումաշ եղած թնդանօթաձիդներ, որոնց քրքրուած համազեստներից դեռ դալիս է նպանդառի կազեմատների: Բոլորը շարէշար վեհաբար անցնում են այն ձանապարհով, որի կողքին նստած է Կոլմարի դատաւորը, և նրա առաջնո՞ւ անցնելիս ամէնքն էլ շուռ են տոլիս նրանից երեխները՝ զայրոյթի ու դզուանքի սոսկալի արտայայտութեամբ. . .

Խեղադ Դոլլինդէր. ուղում էր թագ կենալ, փախչել, բայց չէր կարող — բազկաթոռը բւեռուած էր սարին, կաշուէ շրջանակը կպած բազկաթոռից, ինքն էլ՝ կաշուէ շրջանակից: Այն ժամանակ նա հասկացաւ, որ ինքը այդտեղ նստած է իբրև նշաւակութեան պատժուած և որ նշաւակը այդքան բարձր տեղ են դրել, որ նրա խայտառակութիւնը ամէնքը տեսնեն. . . Իսկ ամբոխի զնացքը շարունակութում է, գալիս - անցնում են զիւղ առ զիւղ — Զուիցերիայի սահմաններից՝ անհամար հօտերով, Սաարի ափերից՝ հանքակիր կառքերի վրայ իրանց կոպիտ երկաւակիերից՝ հանքակիր կառքերի վրայ իրանց կոպիտ երկաւակիերից՝ վաճառականներ, ուարունիներ, փաստաբաններ, գործարունների բոլոր բանուորները, զանազան արհեստաւորներ, վաճառականներ, ուարունիներ, փաստաբաններ, գործարուններ. . . Ահա և Կոլմարի ատեանը, որի առաջնոյ գատաւորներ. . . Պահանջմանդը: Դոլլինդէրը ամօթից քիչ է գալիս և ծեր նախագահը:

մնում մեռնի, աշխատում է ծածկել երեսը, բայց ձեռները բոնուել են, ուղում է փակել աչքերը, բայց կոպերը մնում են անշարժ, քարացած: Պէտք է նա տեսնի նրանց, նրանք էլ իրան տեսնեն, պէտք է նա աչքից բաց չ'թողնի և ոչ մէկը այն արհամարհական հայեացքներից, որ նրա վրայ քցում են պաշտօնակիցները՝ անցնելիս. . .

Սարսափելի զրութիւն է այդ նշաւակութեան մատնուած դատաւորի զրութիւնը. բայց որ ամէնասարսափելին է, — նրա ընտանիքը, նրա բոլոր ազգականները այդ ամբոխի մէջ են և նրանցից ոչ մէկը չի ուղում ցոյց տալ, թէ նրան ձանաչում է: Նրա կինը, նրա երեխանները անցնում են մատովը զիտակոր, աչքները գետնին քցած: Կասես նրանք էլ են ամառում, — մինչև անգամ իւր փոքրիկ Միշէն էլ որին նա այնքան սիրում է և որ ընդ միշտ հեռանում է առանց մի հայեացք անգամ քցելու նրա վրայ: Միայն նրա ծերունի նախագահը մի բոպէ կանգ է առնում ու կամաց ասում նրան՝

«Եկէք զնանք մեզ հետ, Դոլլինդէր: Այստեղ մի մնաք, եղայր . . .»

Բայց Դոլլինդէրը չի կարողանում անդեցը վեր կենալ: Նա չարչարուում է, կանչում է, իսկ գազմականների զնացքը շարունակուում է: Անցնում են ժամեր՝ գեռ զնացքի տուար չի կարուում, իսկ երբ որ իրիկնազէմին գալիս - անցնում են վերջին զաղթականները, բոլոր այդ բազմատաճար ու գործարանաշատ գեղեցիկ հովիտների վրայ իջնում է գերեզմանատան խաղաղութիւն. ու լուսթիւն: Ամրող Ալզասը գաղթել է: Միայն Կոլմարի գատաւորն է մնացել սարի գագաթին՝ բւեռուած նշաւակին, բազմած իւր տեղում և անխախտ իւր պաշտօնում. . .

... Յանկարծ տեսարանը փոխուում է: Գերեզմանախաչե՞ր, տապանաքարե՞ր, սևազեստ բազմութիւն: Կոլմարի գերեզմանատանը մեծաշուք թաղումն է կատարուում:

Քաղաքի բոլոր զանգերը դուշնջում են: Դատաստանական ատեանի անդամ Դօլինգերը մեռել է: Ինչ որ չեր կարողացել անել թասիբը, մահն էր յանձն առել կատարելու, — նա պոկել էր անխախտական դատաւորին իւր կաշուէ շրջանակից, պառկացրել ձիգ մեկնել էր այն մարդուն, որ ուզում էր միշտ բազմած մնալ . . .

Երազում մարդ իրան մեռած տեսնի ու ինքն իւր մաշը ողբայ, — զբանից էլ սոսկալի ի՞նչ զգացմունք կառող է լինել: Դօլինգերի սիրոը կտրատուում է, որ նա տեսնում է իւր սեփական թաղումը, բայց այն, որ ինքը մեռել է այնքան ծանր չի թուում նրան, այնքան սաստիկ չի այրում; մորմաքում նրա սիրալ, որքան այն, որ նրա շուրջը խռնուող այդ աշագին բազմութեան մեջ ոչ մի բարեկամ, ոչ մի ազգական չ'կայ, — ոչ մի Կոլմարացի, բացի պրուսսացիներից՝ ոչ ոք: Պրուսսացի զինուորներ են բացի պրուսսացիներից՝ ոչ ոք: Պրուսսացի աստիճանաւորներ են նրա սգակիրները, նրա գերեզմանի վրայ դամբանական ծառ սառներն էլ պրուսսացի են, այն հողն էլ որ քցում են նրա վրայ և որ նրան այնքան սառն է թուում, աւաղ պրուսսական հող է:

Յանկարծ ամբոխը ակնածութեամբ մի կողմ է քաշուում, ձանապարհ է բաց անում: մօտենում է մի վեհափառ սպիտակ ասպազէն հեծելազօր՝ վերարկուի տակին բռնած անթառամէ մեծ պսակի նման մի բան: Ամբոխի մէջ շշուկ է անցնում:

«Բիսմարկը . . . Բիսմարկը . . .»

Իսկ Կոլմարի դատաւորը տխուր մտածում է.

«Դուք ինձ շատ մեծ պատուի էք արժանացնում, վսեմափայլ կոմս, բայց եթէ այտեղ լիներ իմ փոքրիկ Միշելը. . .»

Խօսքը կիսատ է մնում: — յանկարծ բարձրանում է մի որոտաձայն քրքիջ, մի խելազար, խայտառակ, վայ-

րենի, անվերջ քրքիջ ու չի թողնում որ նա խօսքը վերջացնի:

«Ինչու են ծիծաղում», — հարցնում է ինքն իրան դատաւորը՝ սարսափած: Գլուխը բարձրացնում նայում է . . . կոմս Բիսմարկը երկիւղածութեամբ դրել է նրա գերեզմանի վրայ նրա շրջանակը, նրա կաշուէ շրջանակը, որի վրայ գրուած է՝

ԴՕԼԻՆԳԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ԱՏԵԱՆԻՑ

ՊՐՈՒՍՍԱԿԱՆ ԱՏԵԱՆԻՑ

Անմոռաց լիշտակ և խորին ցաւակցութիւն:

Գերեզմանատան մի ծայրից բռնած միշև ծայրը՝ բոլոր հուշում, թուլանում են ծիծաղից և պրուսսական այդ կոսկիտ ծիծաղը արձագանդ է տալիս մինչև անդամ ստորերկեայ շիրիմում, ուր մեռելը լալիս է ամօթից՝ ձնշուած յաւիտենական ծաղը ծանրութեան տակ. . .



Այդ ժամանակին է վերաբերուում Վ. Հիւզյի յիշատակարանի հետեւալ հատուածը:

1856թ. մայիսի 25-ին Վ. Հիւզօն ստացաւ Մաձինից, որ այն ժամանակ Լոնդոնումն էր, այս երկողողը.

«Խոգրում եմ Ձեզ որ Ձեր ձայնը բարձրացնեք յօդուտ իտալիայի: Իտալիան այս բոպէիս խոնարհուում է կառավարութիւնների կողմբ: Նախազգուշացրեք իտալացիներին և խելք դրեք նրանց գլուխը: Մաձինի»:

Ցունիսի 1-ին անզինական ու բելգիական լրագիրները տպեցին հետեւալ տողերը.

«Մենք ստացանք Յովսէփի Մաձինից հետեւալ հրաւէրը, որ ուղղուած է իտալիային և ստորագրուած է՝ Վ. Հիւզօ»:

Իտալիային.

Իտալացիք, ձեզ հետ խօսում է մի անյայտ, բայց ձեզ նուիրուած եղայր: Զգուշացէք այն բանից, ինչ որ այս բոպէիս վեհաժողովները, կառավարութիւններն ու զիւանագիւառութիւնը ըստ երեսյթին ձեզ համար պատրաստում են: Իտալիան յուզուում է, նա կեանքի նշաններ է ցցց տալիս. նա վրդովում ու անհանդատացնում է կառավարութիւններին. նրանք անհրաժեշտ են համարուում քնացնել իտալիային: Զգուշացէք, նրանք ձեր հանգըստութիւնը չեն ուզում:—Հանդստութիւն կ'ինի միայն այն ժամանակ, երբ որ բաւարարութիւն տրուի ձեր իրաւունքներին:—Նրանք ձեր երկարատեւ քունն են ուզում, նրանք ձեր մահն են ցանկանում.

Մենք գուոզաբար առաջ ընթացող յեղափոխութեան ձանապարհին ենք գտնուում: Ազգերը կորցնում են ամբողջ դարեր և նորից ձեռք են բերում կորցրածը մի ժամուայ ընթացքում: Ազատութեան համար, ինչպէս նեղոս գետի համար, հեղեղումն է պտղաբերութեան աղբիւրը: Հաւա-

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԶՕՆ

ԵՒ

ԻՏԱԼԻԱՆ

(Քաղուածօրէն թարգմ. ուստերէնից*).

Սապօլէօն երրորդը 1851 թուին ֆրանսիական հասարակապետութիւնը խորամանկութեամբ ու բոնութեամբ կայսրութիւն դարձրեց: Բողոքողներին ու մաքառողներին, ի միջի այլոց անմահ բանաստեղծ Վիկտոր Հիւզյին, նա աքսորեց ֆրանսիայից: Հիւզօն շատ ուրիշների հետ գնաց Ջերսէյ կղզին, որ Անգլիային էր պատկանում. բայց փոքրողի նապօլէօնը այդաեղ էլ հանգիստ չթողեց մեծ մարդուն. նա խնդրեց անզիական կառավարութեանը այդ կղզուց հեռացնել Վիկտոր Հիւզյին: Բանաստեղծը այս անգամ ընտրեց Գերնսի կղզին:

*.) Ուստերէն «Рѣчи и воззwanія В. Гюго во время ссыльки» գիրքն էլ քաղուածօրէն է թարգմանուած ֆրանսերէն բնագրից՝ ալմինքն շատ ծառնրից ու հրաւէրներից բաց են թողնուած այնպիսի հատուածներ, որ անկարելի է թարգմանել ուստերէն:

տա՞նք: Հարկաւոր չեն հաշտեցնող միջոցներ, հարկաւոր չեն զիջումներ, հարկաւոր չեն կիսատ միջոցներ, հարկաւոր չեն կիսատ յաղթութիւններ: Բարձրացնենք մեր հայեացքը. թող մեր մտքերը արդար լինեն, թող մեր քայլերը ուղղիղ լինեն: Կիսատ միջոցները բանի պէտք չեն: Ամէն բան կ'կատարուի, և կ'կատարուի մի քայլափոխով, մի օրում, կայծակի ու օրոտի մի հարուածով: Հաւատանք:

թող ձեր յիշողութեան մէջ անցնցելի մնան դիւա-
նազիտութեան գարշելի խօսքերը, — Իտալիան ազգ չի, այլ
աշխարհագրական անուն:

Թող ձեր զլիսում միայն մի միտք լինի, — ապրել
ձեր սեփական տանը, ձեր սեփական կեանքով, լինել իտա-
լիա: Եւ կրկնեցէք անդադար ձեր հոգու խորքում այս
սարսափելի խօսքերը, — մինչեւ որ իտալիան ազգ չ'դառնայ,
իտալացին մարդ չի դառնալ, մարդ չի լինիւ..

1860 թ. Վ. Հիւզօն վերադարձաւ Զերսէյ կղզին
Ճառ ասելու յօգուտ Խոալացիներին: Այդ ժամանակին վե-
րաբերուող հետեւեալ հատուածը կայ նրա յիշատակա-
րանում:

1860 թ. յունիսի 18-ին Զերսէյը անսովոր տեսա-
րան էր ներկայացնում: Բոլոր պատերը ծածկուած էին
յայտարարութիւններով, որոնց վըայ զրուած էր՝ «Վիկ-
տօր Հիւգօն Եկեղ է»: Հինգ տարի առաջ Զերսէյը աք-
սորել էր Վ. Հիւգօյին, իսկ այժմ Զերսէյի ամբողջ ազ-
գաբնակութիւնը առն օրուայ հագուստով ողջունում էր
նրան Սէնա-Հիրիէր փողոցում:

ԱՀԱ թէ ինչ էր:

Հազարի*) հրաշալի արշաւանքի ժամանակն էր, — ար-

շաւանքի, որ ասկեցրեց ամբողջ Եւրոպան: Պատմութեան մէջ անտրակտներ չ'կան: Ազատարարները յաջորդում են միմեւսնց և նման են իրար, բայց կրանց ձակագագիրը տարբեր է: Զօն Բրունից յետոյ գալիս է Գարիբալդին: Պէտք էր օդնել Գարիբալդիի սուրբ գործին: Անգլիայում ստորագրութիւն բաց արին և ահագին գումարներ էին գրուռում: Զերսէյը միաքը բերեց Վ. Հիւգօյին: Կարծռւմ էին, որ, եթէ նա ձայնը բարձրացնի, ստորագրութիւնը աւելի յաջող կ'երթայ: Ամբողջ կղզին այժմ ամաչում էր, որ 1855 թ. պատրել էր նրան: Մի պատճամաւորութիւն ուղարկեցին նրա մօտ, որ Զերսէյի 500 նշանաւոր քաղաքացիների ստորագրութիւնը կրող ուղերձ ներկայացրեց, որով խնդրում էին նրան վերագառնալ Զերսէյ և ձառ ասել յօդուտ Գարիբալդիի: Վ. Հիւգօն 1860 թ. յունիսի 18-ին վերադարձաւ Զերսէյ և ահագին յուղած ամբոխի առաջ ասաց հետեւել ձառը.

Պարսկե՛ր,

Ես պատասխանում եմ ձեր հրաւերին: Ամեն տեղ,
ուր ազատութեան համար ամբիոն են կանգնեցնում և
ինձ կանչում են, ես գնում եմ, այդ իմ բնազդումն է, և
քարոզում եմ Ճշմարտութիւնը, այդ իմ պարտականու-
թիւնն է: (Լսեցէք, լսեցէք):

Ահա Ճշմարտութիւնը. ոչ ոք այսպիսի մի բոպէաւմ
իրաւունք չունի անտարբեր հանդիսատես լինել կատար-
ուաղ մեծ գեպերի. այսօր սկսուած՝ ընդհանուր ազա-
տութեան վեհ գործի համար անհրաժեշտ է ամէնքի ճիգը,
ամէնքի գործակցութիւնը, ամէնքի օգնութիւնը: Ոչ ոքի
ականջը չ'պէտք է խուլ մնայ, ոչ ոքի սիրաը չ'պէտք է
լուի, երբ որ ճիշ են արձակուամ բոլոր ազգերը, այդ ճիշը
պէտք է արձագանդ դանի բալոր մարդկանց օրտերում: Ով

*) Գարիբալդիի խումբը:

որ միայն մի կօպէկ ունի, այդ կօպէկը պէտք է տայ Գարիբալդին, ով որ միայն մի քար ունի, այդ քարը պէտք է նետի նրա թշնամիների զլիխն... .

Գարիբալդին: Ի՞նչ է Գարիբալդին: Մարդ է, աւել ոչինչ: Բայց մարդ՝ այդ բառի ամէնսավսեմ նշանակութեամբ: Ազատութեան մարդ, մարդասիրութեան մարդ:

Զօրք ունի՞: Ո՞չ Մի բուռն կամաւորներ: Պատերազմական մթելքնե՞ր: Ո՞չ Վառնոց: Հաղեւ թէ մի քանի փոքրիկ տակառ: Թողանօթնե՞ր: Թշնամիներինը: Հապա ինչումն է նրա ցիքը. ի՞նչն է նրան յաղթող հանդիսացնում: Ի՞նչ ունի նա հետք: — Ժողովրդի հոգին: Նա առաջ է գնում, նա թռչում է, նրա արշաւանքը հրեղէն գնացք է, նրա մի բուռն վաշար զօրագնդեր է ջարդում, նրա թշոյ զէնքերը թալիսման ունեն, նրա ատրճանակների գնտակները զիմալիումների ոռւմքերին, ժամանակ առ ժամանակ ձակատամարտի խառնաշփոթութեան մէջ, վառօդի ծխում, կրակի փայլատակելու ժամանակ նրա յետեին աստուածուհի է երեսում՝ կարծես նա հոմերի հերոսներիցը լինի... .

... Մենք բոլորս, ով էլ լինենք, ծափահարում ենք իտալիային. . .

Դուք, որ ինձ լսում էք, երեակայում էք արդեօք այդ սքանչելի տեսարանը, ազատ իտալիան, ազատ, ազատ Տարենտեան ծոցից մինչև սուրբ Մարկոսի լճերը, որովհետեւ Վենետիկն էլ կ'ամանակցի այդ տօնախմբութեանը: Երեակայում էք այդ երազը, որ վաղը իրականութիւն կ'գառնայ: Վերջացաւ, յօդս ցնդեց ամէն բան, որ խաբէութիւն էր ու կեղծիք, մոխիր էր ու խուար: Իտալիան գոյութիւն ունի: Իտալիան իտալիա է: Ինչ որ առաջ աշխարհագրական անուն էր, այժմ ազդ է, ուր որ առաջ զիակ էր, այժմ հոգի է, ուրուական էր՝ այժմ հրեշտակապետ, կանգուն, թեատրական է, ազգերի մեծ հրեշտակապետ,

տարած Ազատութիւն: Իտալիան, մեծ մեռելը, զարթնել է. տեսէք, նո վեր է կենում և ժաղառում է ամբողջ մարդկութեանը... .

Եյո, յուսացէք ամէն տեղ աշխարհիս բոլոր երկիրներում: Թող ռուս մուժիկը*), եզիստական ֆելլաչը, եւրոպական աղքատ բանուորը, Հնդկական պարիան, ծախուած նեղը, Ճնշուած սպիտակամորթը, թող բոլորը յուսան: Շղթաները մի ցանց են կազմում, միմեանց պահպանում են, մէկը որ փշրուի՝ ցանցը կ'արձակուի: Հասմի պապը Սուլթանին աւելի մօտ ազգական է քան ինքը կարծում է. նա նրա հարազատ եղբայրն է: Սակայն, կրինում եմ, այդ վերջացել է: Մի տեսակ զերմարդկային բան կայ մարդկանց ազատութեան մէջ: Ազատութիւնը հրաշալի անդունդ է, որ քաշում է դէպի ինքը: Յառաջադիմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ձգողական ցիժի արտայայտութիւն. ով կարող է նրա առաջն առնել: Զարկը տրուելուն պէս սկսուում է անընկճելի շարժումն: Կանգնեցրէք վայր ընկնող քարը, կանգնեցրէք հիւսը, կանգնեցրէք իտալիան, կանգնեցրէք 1789 թիւը, կանգնեցրէք երկրագունտը, որ Աստուած նետել է եթերքի մէջ: (Ազմկալի ծափահարութիւններ):

*) Ինուս գիւղացիներին Ալեքսանդր II կայսը ազատեց նորտութիւնից 1861 թուին:

丁巳仲夏

ԳԻՆ Ե Յ ԿՈՊ.

2218

2013

